

ՄԵՆԿ

Տարեկան դրոշմ 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարաբարակաբար դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզովով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ուսուցչական ժողով
և կաթողիկոսի հայեր: Նամակ խմբագրին: Նամակ
խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ
ԹԻՒՆ: Թիֆլիս: Արտաքին լուրեր: ԽԱՌՆ ԼՈՒ
ԲԵՐ: ՀԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ: ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ: ՅԱՅ
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ՖԵԼԻԵՏՈՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՅԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՒ ԿԱԹՈՒԿ ՀԱՅԵՐ

Ուսման և դաստիարակութեան սկզբունքներն այնպիսի մի անհրաժեշտութիւն է մտաւոր զարգացման ընդունակ ժողովրդի բարոյական կեանքի համար, որ ամեն լուսաւորեալ, քաղաքակիրթ ժողովուրդ աշխատում է այդ ամենակենսական ոյժը, դպրոցական կրթութեան միջոցով, ընդհանրացնել, ժողովրդական դարձնել ազգի ամբողջութիւնը կազմող անդամների մէջ: Մարդկութիւնը, այդ փրկարար ուղղութեան պատճառով այն աստիճան բարձրացաւ և յառաջդրեց, որ մտածում է բարոյական լոյսը տարածել նաև վայրենիների մէջ, որոնք, լուսաւոր աշխարհից անջատված լինելով, մնալով մթութեան մէջ, դարձեալ կազմում են մարդկութեան գերդաստանի մի մաս: Եւ եթէ լուսաւորեալ ազգերի մէջ երևում է ժողովրդական բնաւորութեան և մտաւոր զարգացման մի յայտնի աստիճան, այդ ուսման և դաստիարակութեան միօրինակութեան և հաւասարութեան արդիւնքն է, որ կազմում է մեծամասնութեան ձգտումներին, դադարների մի ամբողջութիւն: Դաստիարակութեան ընդհանրացման և միօրինակութեան պատճառով ազգերը ցոյց են տալիս միացեալ կամքի հաստատութիւն, որ յայտնվում է կեանքի բոլոր

հանգամանքներում: Այդ ցանկալի դադարները, լուսաւորութեան ազդեցութեան շնորհիւ, և ժամանակի ստիպողական պատճառով յառաջացած, մտածել է դրոշմ, և պէտք է մարմնանայ մեր կովկասի հայերիս մէջ է: Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովների գումարման միջոցով մենք կը կարողանանք դաստիարակութեան սկզբունքի մի եղանակ, մի որոշ ազգային ուղղութիւն առաջ տանելու մեր բարոյական կեանքի մէջ:

Մեր ազգայն հայոց ընդհանուր ուսուցչական ժողովը պէտք է գումարվի զխառնութեան սյուղի սյուղ առարկայի վրա մտածելու, որպէս զի պատրաստ է քննութեան ենթարկել այն ամեն նախագիծները, որոնք պէտք է հիմք լինեն մեր ազգայն դպրոցական կեանքի յառաջդրութեան:

Այդ պատկառելի ժողովին ամբողջ հայ հասարակութիւնը սպասում է անհամբերութեամբ, հաստատ յոյս ունենալով տեսնել այն բոլոր ցանկալի նպատակները, որոնք պէտք է հետևանք լինեն այդ ժողովի շնորհիւ:

Թող ներվի ինձ երկու խօսք ասել այդ ազգայն ժողովին, որպէս թարգման Անդրկովկասի հայ-կաթողիկոս հասարակութեան սրտի իսկական ցանկութեան և որպէս անհատ համակող ազգ ազգային ընդհանուր կրթութեան դադարների իրագործվելուն: «Ընդհանուր հայոց» արասանվող բառը իրաւունք է տալիս մեզ յայտնել մեր ցանկութիւնները: «Հայոց ընդհանուր» բառը արտայայտում է ազգային ընդհանրութեան դադարները, այդ դադարների անսահման հասկացողութեան մէջ միացնելով են անխտրաբար բոլոր կրօնաբաժան հայերի սրտի ցանկութիւնները, որոնք հիմք պէտք է լինեն և ազգայն հաստատ ճանապարհ պէտք է պատրաստեն ազգութեան ամբողջ մարմնի

մտաւոր զարգացման համար: Ամենատարակական միտք է, որ մի ազգի համար կըրթութիւնը հարկաւոր է հաւասար ուղղութեամբ, որ ազգութեան մարմնի մի մասի յառաջդրեմը, իսկ միւսի անշարժութիւնը կարող է արգելք լինել ընդհանուր կըրթութեան գործի համար: Գորան ամենապարզ ապացոյց կարող է լինել Անդրկովկասի և կովկասի հայ կաթողիկոս հասարակութեան մտաւոր անշարժութիւնը, որ պատճառ է և պէտք է պատճառէ ազգութեան մարմնի անջատում, խորթութիւնը և եղբայրական ժառանգութիւնը, որ հաւասարութեան փոխարէն է բոլոր այլալոծ մասերի համար:

Անդրկովկասում և կովկասում հայ լուսաւորչականները մեծամասնութիւն լինելով, իրենանց հոգեւոր բարձր կառավարութեան իշխանութեան տակ ունեն հաստատված և համեմատաբար բարեկարգված հարկաւոր միջին և բարձր դպրոցներ, ունեն լաւ ուսուցիչներ, ընթերցանութեան համար հոգացող աշխատողներ, ունեն լրագիրներ, և ունեն նիւթական միջոց ապահովելու դրպրոցների դպրութիւնը հաստատ միջոցներով:

Այդ բոլորի հակապատկերն է հայ-կաթողիկոս հասարակութեան վիճակը, և այդ կարող է գիտել ամեն մի մտացող անձ:

Անդրկովկասի հայ-կաթողիկոսները զեռ չունեն իրանց սեփական եպիսկոպոս, իրանց հոգեւոր բարձր իշխանութիւնը, նիւթական միջոց չունեն բաց անելու ուսումնարաններ և ապահովել նրանց, չունեն մտաւոր զարգացման այն աստիճանը, որ ըմբռնած լինեն դպրոցներ ունենալու դադարների անհրաժեշտութիւնը:

Ախալցխայի, Ալեքսանդրապոլի, Շիրակի, Լոռու, և Ախալքալաքի վիճակների հայ-կաթողիկոսները ոչ մի գիւղական ուսումնա-

րան չունեն, միայն Ալեքսանդրապոլում և Ախալցխայում կան հոգեւոր ուսումնարաններ, որոնք միակողմանի և ամենապարզ կողմից: Այդ ուսումնարանների դրութեան մասին մենք տպել ենք նամակներ «Մշակի» մէջ, որոնք մնացին առանց հետևանքի: Ինչո՞վ կարող ենք այդ դրութեանց դուրս գալ ո՞վ պէտք է օգնէ մեզ և ճանապարհ ցոյց տայ դէպի յառաջդրութիւնը: Անցեալում և ներկայումս էլ մեր հոգեւորականութիւնը եղել է և պէտք է լինի թշնամի ժողովրդի մտաւոր զարգացմանը, միշտ պահպանելով այն ետական, յայտնի նպատակները, որոնք յատուկ են միակողմանի դաստիարակված հոգեւորականութեանը: Իսկ ժողովուրդը եղել է անզգայ անշարժութեան մէջ, կատարելապէս ենթարկված լինելով թէ բարոյապէս և թէ նիւթապէս հոգեւորական դասի ազդեցութեանը:

Ո՞վ պէտք է մտածի մեր ժողովրդի դրութեան վրա, ո՞վ պէտք է հետաքրքրվի նորա վիճակով, եթէ ոչ այն անձինք, որոնք ընդունել են ազգային դադարներ և պատրաստ են իրանց բարոյական պարտականութիւնը կատարելու, և ասելու թէ «մենք ձեզ չենք մերժում, դուք մեր եղբայրներն եք և հաւասար կարեկցութեան կարօտ»: Նոյնքան օգտակար և հեռաժամ է մտածել հայ-կաթողիկոսների վիճակի բարեբան վրա, որքան մեզ հետ ապրող այլազգի, ուրիշ ժողովրդի, թէ կուզ նրանց վիճակը կարող է մեզ հետ կապված լինել միայն ապագայում: Բայց հայ կաթողիկոս ազգայն մնացող, յետագէտ, անշարժ, խաւարի մէջ ապրող եղբայր է, որին դառն հանգամանքները խլել են ազգութեան ամբողջութեան ծոցից, դարձնելով նրան մի առանձնացած մարմին:

ՖԵԼԻԵՏՈՆ

Կարելի է շատերը կարծում են որ այլ ևս դիւանաբաններ չը կան, ասում է խաղաղական մի լրագիր, բայց շատ կը սխալվին: Սատանան, մերթ ընդ մերթ սրան նրան փորն է մտնում, և սոցա խեղդատակ շարժումներ տալով ինքն էլ զուարճանում է: Եթէ չէք հաւատում և կասկածում էք, ահաւասիկ Լիւթիւնի մէջ պատահած մի եղելութիւն կարող է ձեզ ապացոյց լինել: Կին մը երեսակայել և համոզվել է, թէ անպատճառ փորումը զե մտած է, և դեռ փորումը այնքան տանջանքներ է տալիս, որ ինքը կընդ սկսում է ոռնալ, մռնչել, գալարվել, դեմքի վրա թաւալել, և աչքերը անխաղձանքից դուրս ցայտելու չափ կատաղաբար դարձնել: Բուն, հանգստութիւն ամեն բանից զրկել է ինքն այս սահար կինը, կարծես հողին ու մարմնը շարունակ զրբւտած լինէին սատանայից: Մի բանի ծանօթ կանաչք տարել են դիւանաբ կինը «Կիւնի» կոչված եկեղեցին: Անտաղ ժողովրդագետը վրան կարգացել է, այն ժամանակ, ասում են բարեկրօն լրագիրները, կինը դրացել է որ չար սատանան մարմնից դուրս է եկել, բայց ո՞ր տեղից դուրս եղելը ոչ ինքն է հասկացել և ոչ ժողովրդագետը:

Թիֆլիսցիներ երջանիկ է կանխելու գինով,

խորովածով և լոբօշով: Վիեննացին էլ կեանք կառնու գարեջրով, խոզենի խճուղով և կաղամբով: Սրանից զրկվելը երկու ժողովրդի համար անմխիթար վիշտ է:

Ամբողջ մեծ պատը, Վիեննայում, մարտ ամսուն մէջ այնքան ակորթելի եղանակներով անցկացաւ, որ դատելի տօնին նոյնպէս զուարճալի օրեր վայելելու յոյսը վիեննացւոց տեսած պատրաստութիւններից երևում էր: Յիրուսի պայծառ և հիւսնալի մի եղանակ տեղի մինչև չաբաթ օրը: Թէ Վիեննայի և թէ չլրակայ ամառնային դիւղերի պարտէզներում, այգեստաններում, անտառներում, ծառատաններում միլիոնաւոր գարեջրի տակաւներ և բլրաւոր խոզենի խճուղներ պատրաստված էին վիեննացւոց ստամոքսին համար:

Բայց, եղբիւ, ամենք ի դերն ելան, որովհետեւ ընտելւում այլապէս անօրինեց: Ջերմաչափը, որ չաբաթ օրը Բելիւմբերի մինչ 18 աստիճան տաքութեան բարձրացել էր, յանկարծ անակնկալ կերպով, զատկապ առաջին օրը, իբր պատուհաս մինչև դերսն իջնալով երեք օր շարունակ յորդառաւ ձիւն մը սկսեալ տեղալ, և վիեննացիներին հողին ու մարմնը տառեցրեց: Քիչ էր մնացել որ զո՞ գնային այս փութորկին հինգ հոգիներ, որոնց երկուսը դեռատի աղջկոնք և երեքը դեռահաս պատանիներ էին: Սոքա չաբաթ օրվայ պարզ եղանակից քաջալերվելով, ուղեցին զատկապ ասնի օրերը մի գիւղ գնալ զբոսնուլ, ուստի նոյն օրը երկաթուղով Վիեննայից 6 ժամ հեռու Բաքու անուն մի գիւղ գնացել, և իրանց

զուարճութիւնը ասելի հեռուն մղել ուղեւոր և մարտ ամսուն յիմարութիւնները չը յիշելով, մի լեւան վրա են լարձրացել: Հազիւ թէ լեւան զապաթումն են հասել, յանկարծ փութորկի, մրկիլը, ձիւնը սկսել է: Հանապաղէր կորուսել են և 4 օր սարին վրա են մնացել: Շատ նեղութիւն քաշել են սարի վրա, անվրէպ կը մտնին եղել, եթէ խորթի նման մի բան գտած չը լինէին, որուն մէջ ապաստանվել են, և որովհետեւ 40 օր ծով պահող և կենդանի մնացող ամերիկացի և րեկի ճգնաւոր դոկտօր Տաննելին դիւանական աշխատութիւնը ուսումնասիրած են եղել, նրա օրինակին հետեւելով երակին և քունքերին ձիւնով չլիկ են, խոտը ձգմը շուրս են խմել, աղօթել են, լաց են եղել, չը ստուգելու համար միմանց են փաթաթվել, վերջապէս ամեն կարելի եղած բաները անելուց յետոյ որոշում տուել են որ միմանց սպանեն, եթէ օգնութեան համարողներ չը լինին: Հիւսիսային բեռնի նաւաբեկեալներին նման այս խեղճ զատկեցու մոլորեալները ճշմարիտ կը կորէին, եթէ մայրաքաղաքից չիմացուէր և ձիւնաւորներ չուղարկուէր, որոնք գնացին ի խնդիր մոլորեալ ոչխարաց և հինգերկուրդ օրը ասին Վիեննա բերին ակամայ ճգնաւորները կամ լաւ ևս կիսամեռ մարտիրոսները: Իսկ այժմ եղանակները դժայեղի են, և վիեննացիք լաւ վրէժ են լուծում, կենդանի մի խող չը մնաց, զամենքը մորթելցին կեղան, մահաւանդ յիշալ հերոսներից երկու զոյրը այժմ մոլորաւորնոց հնչալար քաղցրութիւնները վայելում են, որովհետեւ այս աղետից յետոյ չուտ մը

պտակվեցան վերտոքն միմանց չը կորսնցնելու համար:

Ամերիկայի լրագիրները գրում են Ֆէլ-բոյ անուն մի մարդու մասին, որ նշանակում է գէր տղայ: Բուն անունը Գալիթ Նապլեո էր: 18 տարեկան եղած ժամանակը 360 քիլոգրամ կըշռում էր, այն աստիճան դէր, որ շատ տարիներ ինքովնը հետաքրքրւորների ցոյց տալով ապրում էր: Անցեալ ամառ, Պիցբուրգում, իրան տեսնելու եկող այցելուների միջից մի աղջկան վրա սիրահարվեցաւ և կնութեան առնելու առաջարկեց: Աղջիկը յօժարեցաւ, բայց ծնողքը այս միութեան դէմ կեցան, վախճալով որ իրանց աղջիկը այդ անաղին բեռնի զո՞ չը գնայ: Այս մերժումից յետոյ սիրահարեալ գէր տղան, սիրտը կոտրած և վշտացած մահողանական կեանք վարել սկսաւ: Քիչ ժամանակից ծաղիկի հիւսնաւորեան ենթակայ լինելով, Պիցբուրգի բնակիչներից ամենաուսեղ լինելով, Պիցբուրգի բնակիչներից ամենաուսեղ 7 մարդիկ հազիւ կարողացան նրան հիւանդանոց փոխադրել: Ամեն անգամ որ անկողնին մէջ շարժում մը կանէր, անկողնին ջարդվում էր և ինքը գետնին էր ընկնում, որտեղից վեր առնելով ուրիշ անկողնի մը մէջ դնելու համար 10 մարդ էր հարկաւոր: Այս ստեղծ անկողնիները հիւանդութիւնը ստատկացուցին, և գէր տղան վերջին անգամ մ'ալ անկողնիը ջարդելով հողին փչեց:

Համբաւատ բժշկականութեան հիմնադիր Հան-նրմանին մի օր հիւանդ անդկալացի լոբ մը այցելութեան է եկել խորհուրդ հարցնելու: Համբաւատ

Մեր մեծ յոյս ունենք որ ապագայ հա-
յոց ընդհանուր ուսուցչական ժողովը ի
նկատի կունենայ մեր մտաւոր վիճակը և կը
մտածէ մեզ համար:

Գոնէ այն էլ բաւական է, որ մեր մանուկ-
ներին անխտիր ընդունեն ամեն դպրոցում,
ի հարկէ առանց զիպչելու մեր կրօնական
համոզմանց: Որքան պէտք է երջանիկ լինի
այն սպորտ, որ միացած տեսնէ մտաւոր
կենսի մէջ իր հարազատներին, որոնք կըր-
թութենից և դաստիարակութենից պէտք է
սովորեն միասին մտածել, միասին հոգալ և
գործել միասին ցաւել և ուրախանալ, և
ընդհանուր մարդկային գերդաստանի մէջ ճա-
նաչվեն որպէս ազգութիւն, որպէս գիտակցա-
բար ապրող ժողովուրդ: Յոյս ունենք դար-
ձեալ մանրամասնորէն խօսել հայ-կաթօլիկ
հասարակութեան մտաւոր վիճակի վրա,
որովհետեւ այդ վիճակը մեծ նշանակութիւն
ունի մեր ապագայ հասարակական կենսի
համար:

Թիֆլիս.

Պետրոս Բէպուրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 ապրիլի

Հատերը անհամբերութեամբ հարցնում են, թէ
ինչու է յետաձգվում «կայծերի» տպագրութիւնը,
արդեօք այդ վէպը տպվելու է, թէ ոչ:

Այդ անհամբերութիւնը եւ բոլորովին իրաւացի
եմ գտնում, առաւել այն պատուելի պարոններին
կողմից, որոնք «կայծերի» բաժանորդ են գրվել,
և որոնցից եւս փող են ստացել:

Բայց «կայծերի» տպագրութեան մինչև այսօր
ուշանալու պատճառը ոչ իմ ծուլութիւնն է եղել
և ոչ մի այլ նպատակ... կային պատճառներ,
որոնց եւս հրապարակաւ անյարմար եմ համարում
բացատրել... իսկ գլխաւորն այն էր, որ այդ
վէպը եւ կամեցայ բաժանորդագրութեամբ տպագ-
րել:

Հետ հասկանալի է երբ մի հեղինակ դիմում է
հասարակութեանը և նրանից կանխիկ փող է
ինդոլում, որ փողարկէր գիրք տալ,—պէտք է
հաւաքված գումարը գոնէ այն քանակութեամբ
հասնի, որ ծածկէ տպագրութեան ծախքը: Բայց
դժբաղդաբար այդ չը յաջողվեցաւ ինձ, եւ չը
ստացայ այնքան բաժանորդներ, որքան սպասում
էի, իսկ սակաւթիւ բաժանորդներից գոյացած
գումարը թղթի ծախքն անգամ չէր բաւականաց-
նում:

Մեղադրելու մեր հասարակութեան սառնասրը-
տութիւնը եւս ցանկութիւն չունեմ, քանի որ ըն-
թերցանութիւնը մեր մէջ դեռ եւս պահանջ չէ

բժշկապետը առանց հիւանդին տրտունջներին ա-
կանջ դնելու, մի քանի վայրկեան քննելուց յե-
տոյ, լորդին քթին մի սրուակ մօտեցնելով,
«Հնչեցե՞ք!... լաւ!... այժմ առողջացա՞ք» ասել է:
Անդիսցին աչքան շուտով բժշկուելուն վրա
յոյժ դարձաւ, «Ինչ է պարտք» հարցրել է,
«հազար ֆրանկ» պատասխանել է բժիշկը: Լորդը
սառն կերպով թղթակալից 25 ֆունտ սթրլինգի
բանգնում մը դուրս հանելով և մօտեցնելով բը-
ծիչին քթին, «Հնչեցե՞ք!... լաւ!... այժմ ձեր
փողը ստացա՞ք» ասել և դուրս է եկել:

Նուազայարդար Օֆֆենբախը մի օր փարիզ
գնալով իջել է իր բարեկամ և արհեստակից Հա-
լէվի տանը: Առաւօտ մը, վաղ ժամանակ, ըզ-
գացել է ստիպողական մի կարիք, որուն միշտ
գերի է մարդկային բնութիւնը: Անկողնից իջնե-
լով աճապարանք գնում է վերոյիշեալ տեղը,
բայց հազիւ թէ ձեռքը դռնափակին վրա է դը-
նում, ներսէն սուր մի ձայն է լսվում «Մարդ կայ»:
—Օֆֆենբախը յուսարեկ, վերադառնում է սե-
նեակը. պէտք եղածին չափ ժամանակ սպասելուց
յետոյ կրկին դալիս է և ուզում է դուռը բանալ,
այս անգամ էլ նոյն ձայնը կրկնվում է «Մարդ
կայ»! Ինչո՞ք ուղղուելով և փորը բռնելով վերս-
տին հեռանում է, հազիւ 2 րոպէ անց է կենում,
դարձեալ դալիս է դողդողալով և բոլորովին գու-
նախաբ: Ինչ սոսկալի վայրկեան! «Մարդ կայ»
բղավում է անիծեալ ձայնը: Նոյն միջոցին բարե-
կամ Հալէվին վրա հասնելով հարցնում է Օֆ-
ֆենբախին թէ ինչ ունի:

դարձել, քանի որ կօշկակարի արդիւնաբերութիւ-
նը չափ է տալիս, իսկ դրական վաստակը դժբաղ-
դացնում է գրողին...

Այսու ամենայնիւ, իմ սակաւթիւ բաժանորդ-
ներին երկար սպասել չը տալու համար, եւ կը
շտապեմ որքան կարելի է շուտով տպագրել
«կայծերի»: Ծախքերի պակասը կը լրացնեմ
պարտքերով: Վէպի բնագիրը արդէն յանձնված
է ցենզորին. թողտուութիւն ստացածին պէս կը
սկսվի տպագրութիւնը:

Եւ որովհետեւ ինձ շատ դժուար էր մի և նոյն
ժամանակ տպագրել թէ «կայծերը» և թէ «Կա-
ւիթ բէկի» վերջին հատորը, այդ պատճառով
ստիպվեցայ «Կաւիթ բէկի» շարունակութիւնը
առժամանակ ընդհատել «Մշակի» մէջ, մինչև
«կայծերի» լոյս տեսնելը:

Բաֆֆի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 ապրիլի

«Գործ» ամսագրի առաջին համարը մինչև այժմ
չուղարկվեցաւ բաժանորդներին, մեզանից բոլոր-
վին անկախ պատճառներով:

Արդեւքների առաջն առնելու համար մենք ե-
կանք Թիֆլիս և այս օրերս յոյս ունենք մեր ան-
համբեր ընթերցողներին բաւականութիւն տալ:

Ս. Հախումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 27-ին, առաւօտեան 11 ժամին, վախ-
ճանվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ նորին պայծառափայլու-
թիւն իշխան Իրակլի Ալեքսանդրեան Գրողինսկի,
վրաստանի վերջին թագաւոր Գեորգի XIII-ի հա-
րազատ եղբորորդին:

Ռուս լրագիրները հաղորդում են որ կոմս Լո-
րիս-Մէլլը Զանաւելու է Ս. Պետերբուրգ մայիս
ամսին:

ԻԳԻԻԻՑ մեղ գրում են հետեւալը: «Անցալ
1881 թվին, երբ պ. Հայրապետեան նոր ընտրվե-
ցաւ Իդգիրի հասարակութեան կողմից գօլօսիս,
այդ պարտը խոստացաւ որ Իդգիրում օրերդա-
կան դպրոցի համար շինութիւն կը կառուցանի,
ընդհանուր ոյժով, ինչպէս և տպված էր անցալ
տարի հայոց լրագիրներում: Բայց մինչև այժմ չի-
նութիւնը սկսվելու նշանները չեն երևում, չը
նայելով որ խոստանալու օրից երկու տարի է
անցել: Ինչ արած. մենք միայն խօսող ենք և ոչ
կատարող»:

Նոյն տեղից մեղ գրում են: «Ինչպէս ձեզ յայտ-
նի է, սրանից երկու տարի առաջ, Իդգիրից չորս
վերստ հեռաւորութեամբ գտնվող Խալֆալու գիւ-
ղում են աշխարհիս վրա:

—«Տանջանքիս վախճանին սպասում եմ պա-
տասխանում է Օֆֆենբախը.—բայց ինչի ներս
չէք մտնում:—Այս մի ժամ կայ որ սպասում
եմ, ներսը մարդ կայ:—«Վնաս չունի, մոէք,
մարդ կայ ասողը իմ թուրքին է» ասում է Հա-
լէվին ծիծաղելով:

—Ստանան տանի դա կենդանին, ասում է
Օֆֆենբախը խուճապանքով ներս մտնելով, եթէ
մի երկվայրկեան ուշանայի, էլ համբերութիւնս
պիտի հասնէ և...»

Ներկայ դարու ամենանշանաւոր ակնարդմե-
րից հաշակաւոր դոկտոր Արլու ծննդեան եօթա-
նասուններով տարեդարձը կատարուելուց Բացի
այն ամեն ուսանողներից, որոնք իր դասերը լսած
էին, եօթնամասնաւոր բժշկապետին վաղմիւ ա-
շակերտներից խումբ խումբ վերադարձին էլ ե-
կել էին իրանց յարգանք և մեծարանքը մատու-
ցանելու համար մեծանուն պրոֆեսորին, որ Վի-
էննայի համալսարանական պոսակը դարդարող ծա-
ղիկներից գեղեցկագոյնը ճանչցուած է: Ամեն եր-
կրներից, Աւստրիայից, Ունգարիայից, Ֆրան-
սիայից, Բելգիայից ամենքն էլ պատկառելի և
հանճարեղ դոկտորին մեծագործութիւնները լսած,
և երախտաբոլորական զգացմունքներով լցուած ե-
կած էին զինքը ըստ արժանւոյն պատուելու հա-
մար: Ինչպէս բժշկականութեան մէջ գլխաւոր
հանդիսացողներին շատերը Բօնմիայից են, այն-
պէս էլ ակնարդող դոկտոր Արլու Բօնմի Պրակ-
քալցուս ծնված և այնտեղ հրատարակած գրքե-
րով համբաւ ստացած էր: Յօդերեանք այս անգամ

զի աւերակները քանդելով դուր էին յոճանց և
ասորոց տառերով ծածկված արծաթեայ բազմա-
թիւ դրամներ, որոնց շատերի վրա էլ նկարված
էին խաչեր և պատկերներ: Այն ժամանակից յե-
տոյ հողի միջից դուրս էին եկել նմանապէս սըր-
բատաշ քարեր, հայոց տառերով արձանագրված:

Մեղ գրում են Շիրակի գաւառից որ քրդերի և
թուրքերի մէջ յաճախ կրկնվում են մարդասպա-
նութիւններ: Քանի մի օր սրանից առաջ Շիրակի
գիւղերից միում մի քրդը գնալով ոչխար գողա-
նալու, ոչխարի տէրը այդ իմանալով իսկոյն հը-
րացանով է զարնում գողին: Գողի ընկերներն էլ
սկսում են սրբով զարնել ոչխարի տիրոջ: Երկու
կողմն էլ վիրաւորվածներ կան:

Շարժակաւութեամբ ստացանք պ. Բ. Ի. Ստատ-
կօվսկու գիրքը ուսուցչին լեզուով «Макроскопи-
ческие организмы» վերնագրով: Դա շատ հետա-
քերի գիրք է, խօսում է զլիւսաւորապէս փարիզի
Մօնտրի ասված օրէնքաւորաւոր մէջ պ. Մի-
կէլի ձեռքով միկրոսկոպիական օրգանիզմների վրա
արած նոր հետազոտութիւնների մասին: Պ. Ստատ-
կօվսկի ամբիօն է 134 երեսից բաղկացած իր
գրքի մէջ այն բոլոր հետազոտութիւնների հե-
տեանքը, որոնք կատարվեցան վերջին ժամանակ-
ներում այն մանր կենդանիների վրա, որոնք դը-
տնվում են օդի, թղթի, կերակուրների և ջրի մէջ
և որոնք յայտնի հանգամանքներում բազմանալով,
վարակում են օդը և գոյացնում են այլ և այլ
տարախոտիկ հիւանդութիւններ: Գիրքը այն աս-
տիճան հետաքրքիր է, որ մենք կաշխատենք մի
այլ անգամ ծանօթացնել ընթերցողին նրա բու-
վանդակութեան հետ: Գրքի վերջում տպված են
այդ փոքրիկ կենդանիների պատկերներ, որոնք
միկրոսկոպով չը դիտարկված աչքով չեն երևում
և որոնք կրում են այլ և այլ անուններ, ինչպէս
բակտերիաներ, բասիլիաներ և այլն:

Մեղ խնդրում են յայտնել հետեւալը: Կիրակի,
մայիսի 2-ին, Հաւաքարի Ս. Մարիամեան օրիոր-
դական դպրոցի վարչութեան կարգադրութեամբ,
յօդուտ նոյն դպրոցի, պ. Ներսիսեան, որ եկած
է Ամերիկայից, ցոյց կը տայ Հաւաքարի Քաղա-
քային դպրոցի դահլիճում դիտութեան ամենանոր
քանի մի հետաքրքիր գիւտեր, ինչպէս, օրինակ,
Փօնօգրաֆ, Թելեֆօն, քանի մի էլէկտրական գոր-
ծիքներ և այլն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Թիֆլիս

Կ. Պօլից «Polit. Corresp.» լրագրին
գրում են ապրիլի 21-ից: Այսուհը օրից օր

կատարուող ակնարդման մեծագործութեանը վրա
մի դադարաւոր տալու համար, բաւական է ասել
թէ մինչ հիմայ 8000 մարդու աչքի լոյսը բաց է
արած: Չարմանալի է որ տակաւին կոյրեր գտն-
վում են աշխարհիս վրա:

(Չարմանալի վիճակաւորութիւններ):
1881 տարվայ շրջանում, միայնակ թղթատա-
րութեան վարչութիւնը իր սեպհական երկիրե-
րում 3 միլիարդ 886 միլիոն նամակ է ուղարկած:
Պէտք է ակնարկեն այս գումարին վրա 649 մի-
լիոն բաց նամակ, 1 միլիարդ 23 միլիոն տպա-
գրեալ նամակ, 1 միլիարդ 983 միլիոն լրագիր, 64
միլիոն այլ և այլ օրինակներ, 98 միլիոն փոքր
ծրարներ, 95 միլիոն դրամատուր նամակներ, որոնց
պարունակութեան արժէքն է 6 միլիարդ 45 մի-
լիոն ֆրանք: Օրական ուղարկվում է աշխարհիս
ընդհանուր տարածութեան վրայ 13 միլիոն բաց
և դրց նամակ, առանց տպագրութեանը հաշուելու:
Այսպէս ուրեմն, ամեն տարի 3 միլիարդ 418 մի-
լիոն նամակ ուղարկվում է Եւրոպա, 1 միլիարդ
246 միլիոն Ամերիկա, 76 միլիոն Ասիա, 36 մի-
լիոն Աւստրալիա, 11 միլիոն Աֆրիկա, ընդհանուր
նամակների գումարն է 4 միլիարդ 786 միլիոն,
որ երկրագնդի բնակչաց թվին հետ համեմատելով
իրաքանչիւրին 31/2 նամակ է ընկնում:

Ֆրանսիայում 19 միլիոն 500 հազար բնակչւք
ապրում են երկրագործութեամբ. 1 միլիոն 600
հազարն ապրում են գրականութիւն, գեղա-
րուեստ և հասարակ արուեստ: 9 միլիոն 300 հա-

սպասում են մինիստրական փոփոխութիւն-
ների: Շատերը հաւատացնում են, որ թիւր-
քաց դեսպանը Վիէնայում, Էդհարմարաւ,
մինիստր է նշանակվելու: Այժմ հաւատաց-
նում են, որ Արշիպեպոսոսի նախկին նա-
հանգապետ Սայրդ-փաշա արտաքին գործե-
րի մինիստր է նշանակվելու: Այդ լուրերին
առիթ տուեցին երկու փաստեր. առաջինը,
որ Սայրդ-փաշա յանկարծակի Կ. Պօլիս կանչ-
վեցաւ և նրա տեղ մի այլ նահանգապետ
նշանակվեցաւ, և երկրորդը, որ նա երկու
անգամ տեսակցութիւն ունեցաւ սուլթանի
հետ: Նոյն լրագրի, աւելի ուշ ստացված
տեղեկութիւնների համեմատ, Սայրդ-փաշա
Փոքր-Ասիայի վերանորոգութիւնների մասնա-
ժողովի նախագահ է նշանակված, թէպէտ
շատ կարելի է, որ նա այնու ամենայնիւ
արտաքին գործերի մինիստր նշանակվի: Եր-
կու տարի սրանից առաջ Սայրդ-փաշա Բեկ-
կեր-փաշայի հետ ճանապարհորդեց Փոքր-
Ասիայի մէջ Հայաստանի և Քիւրդիստանի
գործերի դրութեան մասին սուլթանին գե-
կուցումն ներկայացնելու համար: Այդ հար-
ցի վերաբերութեամբ Բեկկեր-փաշայի և
Սայրդ-փաշայի արած բոլոր առաջարկու-
թիւններից ոչ մէկը չիւրագործվեցաւ: Բայց
Սայրդ-փաշա, գիտեսալով օտար լեզուներ
և բարձր ուսում ստացած լինելով, սուլթա-
նի ուշադրութիւնը իր վրա դարձրեց: Ասիմ
փաշայի գրութիւնը իբրեւ արտաքին գործե-
րի մինիստր, շատ անտանելի է: Նրա քար-
տուղար Արթին-էֆենդի երբեք նրա հետ
չէ խօսում, երբեք ծառայութիւն չէ գնում
և անմիջական յարաբերութիւններ է կա-
պել պալատի հետ: Այդ պատճառով Ասիմ
փաշա երկու անգամ հրաժարական ներկա-
յացրեց, բայց սուլթանը չարձակեց նրան
ծառայութենից: Ինչ կը վերաբերի, առա-
ջին մինիստր Սայրդ-փաշային, նրա հրաժա-
րականի մասին լուրերը դադարեցին: Նա
չափազանց անբաւական է իր դրութենից,
որովհետեւ չէ կարող անկախ գործել: Նա
իրան դժբաղդ է համարում: Առհասարակ
Թիւրքիայում ներկայումս շատ քիչ բաղդա-
ւոր մարդիկ կան: Պալատի և անդիական
դեսպանատան յարաբերութիւնները, որոնք
քիչ առաջ գրեթէ թշնամական էին, ներ-
կայումս փոխվել են զեպի լաւ: Նորերումս
սուլթանը ընդունեց Բեկկեր-փաշային, որ մի

դար մարդուց դրամուքն է ատաղձարան, գոր-
ծարան և ձեռակերտ: 4 միլիոն 200 հազար վա-
ճառական, բանկ և կոմիսիոն: 2 միլիոն 400 հա-
զար կալուածատեր և անձիկով ապրողներ:

Քաղաքակրթեալ երկրներում չըջարեութեան
հանուած դրամոց քանակութիւնն է 34 միլիարդ
ֆրանկ, որուն 18 միլիարդը ռսկի, արծաթ և 16
միլիարդը թղթադրամ է: Այս թղթադրամներից
չըջաղապում է 3 միլիարդ 670 միլիոն Ամերիկայի
Միացեալ Նահանգներում, 2 միլիարդ 600 միլիոն
Ֆրանսիայում, 1 միլիարդ 732 միլիոն Աւստրիա-
յում, 1 միլիարդ 600 միլիոն Իտալիայում, 1 մի-
լիարդ 200 միլիոն Գերմանիայում, 1 միլիարդ
630 միլիոն Ռուսաստանում, 1 միլիարդ 100 մի-
լիոն Անգլիայում և 2 միլիարդ 470 միլիոն երկ-
րորդական տերութիւններում:

Փարիզու փողոցներից ծխուած սիկարների ծա-
րի հաւաքողների թիւը հասնում է 500-ի: Հա-
ւաքողները աշխատում են օրը 4-ից մինչ 5 ֆը-
րանկ: Հասարակօրէն առաւօտները շատ վաղ ըս-
կավում է այս հնձաքաղը, որուն տարեկան հա-
սոյթը հասնում է 750,000 ֆրանկի: (Աւալ! ամ-
բողջ հայ լրագրաց բաժանորդայնների դուռնարը
սա վառած սիկարների ծալքին անգամ չէ հաս-
նում):

Լիվրպուլի առողջապահական ընկերութիւնը,
քաղաքակրթեալ այլ և այլ երկրներում արեցո-

խակաւան գնի համեմատ: „Новое Время“ լրագիրը հարգորդում է: Կոխանօվի մասնա-
ժողովին մասնակցելու համար էկսպերտները
կը հրաւիրվեն նոյեմբերին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 27 ապրիլի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
93 ռ. 75 Կ., երկրորդ 90 ռ. 62 1/2 Կ., եր-
րորդ 90 ռ. 87 1/2 Կ., չորրորդ 90 ռ. 87 Կ.,
հինգերորդ 90 ռ. 80 Կ., ներքին 5% առա-
ջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ռ.
25 Կ., երկրորդ 212 ռ., արեւելեան առա-
ջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ.
37 1/2 Կ., երկրորդ 90 ռ. 50 Կ., երրորդ
90 ռ. 50 Կ., ոսկի 8 ռ. 5 Կ.: Ռուսաց 1 ռ.
լօնդոնի վրա արժէ 24,43 պէնս, Ամստեր-
դամի վրա 123,50 պէնս, ռուսաց 100 ռ.
Համբուրգի վրա արժէ 209 մարկ, ֆարդի
վրա արժէ 257 ֆրանկ 25 սանտիմ: Բորսայի
տրամադրութիւնը ամուր է:

ՄԵՇԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼ. Պ. Բ. Շատ ցաւում ենք
որ երեք անգամ եկած էք մեր խմբագրատունը և
մեզ չը գտաք: Մենք խմբագրութեան գրասենեա-
կի մէջ լինում ենք ամեն օր, բացի կիրակի օրե-
րից, 1 ժամից, մինչև 2 ժամ: Իսկ այնուհետև
մեզ կարելի է գտնել 5 ժամից սկսած, ոչ թէ
խմբագրատան մէջ, այլ տանը: Ինչ որ վերաբը-
րում է ձեր յօդուածներին, այսօր կ'ստանաք. եթէ
զրեք ձեր յօդուածները աւելի որոշ, աւելի մա-
քուր ձևերով և աւելի կանոնաւոր լեզուով, մենք
նրանց միշտ աւելի շուտ կը տպենք: Պարզ է որ
խմբագրի համար աւելի հեշտ է շուտով տալ շա-
րեւտ այնպիսի յօդուածներ, որոնք լաւ են գրած,
քան թէ այնպիսիներ, որոնց պէտք է դեռ գրատել,
կամ նոյն իսկ նորից արտագրել:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկին Շահին Յովհաննէսեան և
Օգոստոս վաճառատնէր ցաւօք արտի
յայտներով, առաջին իւր ամուսնւոյ և
երկրորդ իւր եղբոր վաճառ վաճառ-
նէան ՄԱՀԻ, խնդրում են իրանց
ծանօթներին, յարգել հանգուցելոյ
յուզարկաւորութիւնը, որ տեղի կունե-
նայ հինգշաբթի, ապրիլի 29-ին ժամը
10-ին: Մարմինը կը տանեն Ամիրօվի
տանից Գոկտորսկայեա փողոցումը №
12. Մոզուոյ սուրբ Գեորգ եկեղեցին:

1—1

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրա-
տարակութիւնների VI զրբոյի 2. Գիկիւն-
սի „Հարս և Սկետուր“ թարգ. օր. Ն. Տէր-
Մարկոսեանի: Գրքի իրեն յաւելուած
ապուած են գրականութեան վերաբերեալ
յայտարարութիւններ, առաջարկութիւններ
և այլն:

Գինն է 15 Կ.

Հասցէն Թիֆլիս. Կոնստ. Նազարեան.

Ապրիլի 15-ից Կոնստանտին գրադա-
րանում, որ գտնվում է Արծրունու գալլերէի
№ № 149 և 150 բացված է հայերէն
գրքերի բաժանումը: Ամսական վճարը մի
գրքի համար 30 Կ., երկու գրքի համար
50 Կ., իսկ երեք գրքի համար 80 Կ.:

Գրաւ պէտք է թողնեն 2, 3 կամ 5
րուբլ, նայած քանի գիրք է ստանում:

Գրադարանը բաց է ամեն օր առաւօտեան
8 ժ. մինչև երեկոյեան 8 ժամը:

8—10

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ

Որ մայիս ամսի կէսից մինչև ամառվոյ
վերջը բնակվելու է ՄԱՆԳԱՆՈՒՄ, յանձն է
առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ
գասերով գանազան ուսումնարանների աշա-
կերանների և աշակերտութեան հետ և թէ
փոքր երեխաների հետ:

Մանրամասն ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ո՛ւմ
և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է
պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞րքան
ժամ և այլն և այլն խնդրում են ցանկա-
ցողներին թողնել „Մշակ“ խմբագրատան
մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսա-
նողի հասցէն:

14—15

ՅԵՐՈՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՆԱՏՈՒՄ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Արծրունու գալլերէում № 144 ՄԱՊՈԼԻՄ Է
արժան գնելով վիեննայի
Տոնէտ ֆարբիկայի ամեն տեսակ ՄԵՇԱԿԻ, նոյնպէս խաւիկայի ՄԱՐՄԱՐՈՒՆԻ քարերը:
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Ե
ՇՐՈՒՄՆԵՐԸ:
30—60

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՄԵՇ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ՄԻՆՁԵՒ ԱՍՏՎԱՅՑ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 Կ. զիւժիւր, ԾԱՐԱՆԵՐ 3
Կ. հարիւր, սապօն 3 Կ. հատը, ալեի
ժԱՄԱՅՈՅՆԵՐ 50 Կ., ԵՂՊԱՆԵՐ (նոր ու-
կուց) ժամացոյցի համար 50 Կ., կրաններ
10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կփեր 25 Կ.,
կախարաններ 4 Կ., ՖԱՏԵՐԱՆԵՐ 3 ռ., Տը-
ճիւններ 1 ռ., հայելիներ 35 Կ., վարակը-
ներ 4 ռ., պիշակներ 6 ռ., ԱՄԲՈՂՋ ՉԱ-
ԳՈՒՍ 13 ռ., գլխարկներ 1 ռ., չը թըջող
վերարկներ 6 ռ., շէտոկա 90 Կ., ԱՍԵՂ-
ՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղա-
մարդկանց ԳՈՒԲԱՆԵՐ 2 ռ. 50 Կ. զիւ-
ժիւր, ՄԵՂԱՄՈՒՄ 32 Կ. անգլիական ֆուճ-
ուր, կանֆետներ 40 Կ. ֆուճուր, ԳՐԱՊ,
արիկ, ԱԼԲՈՒՄԵՐ, բրիտանական մեղալի
առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր,
մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐՄԵՐՈՒՆԻ ԳԱԼԼԵՐԷՑ:

25—50

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿՑ

Էրնատ Հօֆմանի „ԹՈՒՂԹ ԽԱՂԱՅՈՂԻ
ԲԱՂԳԸ“ վերնագրով զրբոյի հայ թարգմա-
նութիւնը: Թիֆլիսում ծախվում է „Կեն-
տրօնական“ և „Կովկասեան“ գրաւաճառա-
նոցում, իսկ Նրեանում՝ Բարեկամ մանկանց՝
գրաւաճ. պ. Սիմէօնեանցի մօտ:
Գինն է 25 Կօպ.

5—5

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաներ, պա-
նիր-չեստեր, խաւիար և այլն: Ծախվում են
շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բաղվածու-
մահճակալ 8 ռ., ամբողջ ՀԱԳՈՒՍՏ
12 ռ., չը թըջող վերարկներ 6—18 ռ.
և մեծ քանակութեամբ ԲԵՎՈԼՎԵՐ-
ՆԵՐ, դանակներ և այլն:

4—10

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . . 8 roubles

6 mois. . . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ է ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ը Ն 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. վիեննայի ՄԵՇԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակաթիւր 8—30 ռ., չա-
մարաններ 250—25 ռ., սակփցածներ 1. 30—12 ռ., սոււն գոլէն եր ձա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վարներ 60
Կ.—1.25 ֆուճուր, կուլօնի պինձէ ամաններ, Կերմանիայի երկաթէ էմալով
ամաններ. ու մ ի վ ա յ ի կ ն եր մ ր ա մօ ղ ի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լույսի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
ռ., պարոններ. (գուլաններ) ընթացիկ, սիգար Բէնզարդի ֆարբիկից, պապի-
րոս և թամբալու կուլնարովի գլիլի պապիրովի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԻՑ (չայ) ԵՂ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բրակվում. (սուխար չայու և կաֆէի) Լինէմի. կօֆէ Լինէմի և
Միլէնսի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 Կ. հայելիներ ամենայն տեսակ
28 Կ.—240 ռ., պրոբկալ գլինէֆաճանների, հանքային և դարեջրի (дѣя
зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пучк), պարոնների սամուլարի և
չայու, դանակ չանդալ գանազան ֆարբիկաների 1 ռ. 20 Կ.—25 ռ. գուլթիւր.
գրակաթիւր 1 ռ. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջրի 1—60 Կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 Կ.—1 ռ., հատը, կուլաններ 1—40 մինչև 3—20 Կ. պրիբօր.
միս կարելու մաշկնայ. Անգլիական ուլթոններ, բրիտանակի չայիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, շաղաքներ կաֆէի համար, ֆիլտեր—Չուր մարբերու,
կրամալ կարօբիւն 18 Կ., փաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փաշտի, կանկերա-
ներ, սուրբուլ, մատիտ, գրիչ երկաթէ, գրակաթ, քարեախտակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիներ, դրաներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի
և բրիտանակի դուլթիւր 1—50 Կ. մինչև 12 ռ., և չայու 45 Կ.—5 ռ., չու-
միկէք 45 Կ.—5 ռ., շամարաններ ամեն տեսակ 25 Կ.—12 ռ. Չուխտ, պո-
սապոշկաններ վարչակու, Ռեզիւնի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլթիւրներ կա-
նանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. Չուխտ, շապիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գոնտիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրեկ և շաքի. սանդղեր շի-
մայու ոսկրէ, դուսապիլովի և փայտէ, շոտկաներ գլիլի շորի, սապոլի, պոլի և
կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատիկի կօճի և շալէ (газетъ) ֆէլ-
չատիէք մարդկերանց և կանանց, պարոնաններ, քիսաններ, պապիրոսի ամաններ
և մանր զոլանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ.,
կտոր, հոտովէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտովէտ պարաշկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻՑ, և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիւրեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԻԼ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՒ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթիլկայ փողոցի առ-
կիւնում № 13.

Փարաբալաքացիք կարող են զիմել հետեւեալ հասցէով. Թիֆլիս Կո-
նստ. Ն. Թեր-Նիկոցօւ.

40—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ է ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ը Ն 13.